



## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 13 » սեպտեմբերի 2022թ.

ՀՐԱՄԱՆ N 437-Ա

«ԿՈՆԴՈՐ ԷՅՐԼԱՅՆՁ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հուլիսի 22-ի N 372-Ա հրամանը և «Կոնդոր Էյրլայնզ» ՍՊ ընկերության 2022 թվականի սեպտեմբերի 8-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Կոնդոր Էյրլայնզ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/ երթուղով՝ 2022 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև 2023 թվականի մարտի 24-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ

Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:


2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հուլիսի 22-ի N 372-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/- Ֆրանկֆուրտ/EDDF/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2022-2023 թվականների ձմեռային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2022 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև 2023 թվականի մարտի 24-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հուլիսի 22-ի N 372-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3"Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Կոմիտեի կայքում:

4.Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ՍԻՄՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ

 Recoverable Signature

X



ՍԻՄՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ

Signed by: ASATRYAN SIMON 3811700103

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 131/2022

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱԿ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱԿՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 131/2022

TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR  
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF  
ARMENIA

Օդանավ շահագործողը  
Aircraft Operator

«Կոնդոր Էյրլայնզ» ՍՊԸ  
"Condor Airlines" LLC

Օդանավի (օդանավերի) տիպը  
(տիպերը)  
Type(s) of aircraft(s)

A320, A321, A330, B757-300, B767-300

Հաճախականությունը  
Frequency

շաբաթական 2 չվերթ  
2 flights per week

Երթուղին  
Air route

Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/-  
Ֆրանկֆուրտ/EDDF/  
Frankfurt/EDDF/-Yerevan/UDYZ/-Frankfurt/EDDF/

Թույլտվության գործողության ժամկետը  
Permission validity

30/10/2022 մինչև 24/03/2023  
30/10/2022 till 24/03/2023

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՅԻԱՅԻ  
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՏԱՐՈՂ  
ՍԻՄՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ  
ACTING CHAIR OF THE  
CIVIL AVIATION COMMITTEE  
SIMON ASATRYAN

9/13/2022

X



ՍԻՄՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ

Signed by: ASATRYAN SIMON 3811700103



13.09.2022  
(տպառու ամսաթիվը)  
(date of issue)